Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սեմյոնովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար ,3×4 չափի

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ հունվարի 18-ից մինչև հունվարիի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. փետրվարի 3-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա գյուղի հիմնական դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց, շենք 78:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-25-31 հեռախոսահամարով: